

Հ Ր Ա Մ Ա Ն N 549-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«24» ՀՈՒՆԻՍԻ 2020 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ԱԼԼԱ ԱՐՄԵՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 12-3-23.2-Մ2-1)
ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով և 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ կետը և Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 12-3-23.2-Մ2-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 22-ի եզրակացությունը ու Ա. Միքայելյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ալլա Արմենի Միքայելյանին 2020 թվականի հունիսի 24-ից, 9 ամիս փորձաշրջանով, նշանակել պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 12-3-23.2-Մ2-1) պաշտոնում:

2. Փորձաշրջանի ընթացքում Ա. Միքայելյանի փորձաշրջանը համակարգող նշանակել պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 12-3-23.2-Մ2-2) Սիմա Վիրաբյանին:

3. Աշխատավարձը սահմանել՝ 212 309 ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6/24/2020

X



Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ